լսէ Տէր ձայնի աղաչանաց Ձերոց և պահէ զիս վասն սիրելի Եկեղեցւոյն իւրոյ։

Կեցիցես վասն Ձեր և դուք վասն Քրիստոսի. Ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆՈՑՆ ՀԱՅՈՑ

Գրեցաւ անդրանիկ Կոնդակս օրհնութեան
ի 15 ն դեկտ 1893 ամի Փրկչական
և ըստ տօմարիս ՌՑԽԳ.
ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի Ս. Էջմիածին.
ի Վաղարշապատ։

Օգոստոս 1888 ամի. այն ինչ լուեց լրագրերից և պաշտօնապէս ստուգուեց, որ Կայսրն ամենայն ռուսաց Ալէքսանդր Բ. Ալէքսանդրովիչն մտադիր է գալ այցելութեան Կովկասեան աշխարհին, յայտարարութեամբս ի 10 օգոստ. հմ. 212 հարցրեցի Ս. Մակար Վեհ. Կաթուղիկոսից թէ « . . . ի գալն Կայսեր ի Բաղու՝ ոՐպիսի հանդիսիւ ընդ առաջ գնացից հանդերձ հայ հոգեւորականութեամբ ևն . . . » ։

Առ որ՝ Վեհ. Կաթուղիկոսն կոնդակաւ ի 20 այնր օգոստոսի հմ. 334 տայ ինձ հրահանգութիւն ընդունելութեան Կայսեր՝ հետեւեալ օրինակաւն.

ԿՆԻՔ
1885

Մակար ծառայ Քրիստոսի եւ անհատանելի կամաւն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.